

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

**Սեյրան Չաքարյան** - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....8

**Сейран Закарян** - *ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.* ..... 16

**Seyran Zakaryan** - *GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.* ..... 17

**Հասմիկ Ամիրջանյան** - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ..... 19

**Асмик Амирджанян** - *ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.* ..... 27

**Hasmik Amirjanyan** - *ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.* ..... 28

**Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան** - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ ..... 29

**Вардан Мхитарян, Гохар Гамбарян** - *ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.* ..... 39

**Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan** - *INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX*..... 39

**Լիլիթ Մակարյան** - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ..... 45

**Лилит Макарян** - *К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.* ..... 49

**Lilit Makaryan** - *ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.* ..... 49

**Ֆելիքս Մովսիսյան** - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ..... 50

**Феликс Мовсисян** - *ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.* ..... 66

**Felix Movsisyan** - *ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.* ..... 67

**Սուսաննա Առաքելյան** - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ..... 69

<b>Сусанна Аракелян</b> – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896. ....	87
<b>Susanna Arakelyan</b> – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896. ....	87
<b>Գեղամ Բաղայան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
<b>Гегам Бадалян</b> – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). ....	115
<b>Gegham Badalyan</b> – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). ....	115
<b>Աննա Վարդանյան</b> – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	117
<b>Анна Варданян</b> – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ. ....	123
<b>Anna Vardanyan</b> – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. ....	124
<b>Գայանե Հովհաննիսյան</b> – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ .....	125
<b>Гаяне Оганнисян</b> – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г. ....	132
<b>Gayane Hovhannisyan</b> – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926). ....	133
<b>Արտակ Խաչատրյան</b> – ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
<b>Артак Хачатрян</b> – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
<b>Artak Khachatryan</b> – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). ....	141
<b>Մանյակ Երանոսյան</b> – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) .....	142
<b>Маняк Ераносян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
<b>Manyak Yeranosyan</b> – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). ....	150

<b>Գևորգ Կեսոյան</b> - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
<b>Геворг Кесоян</b> - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
<b>Gevorg Kesoyan</b> - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
<b>Արման Սաֆարյան</b> - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
<b>Арман Сафарян</b> - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
<b>Arman Safaryan</b> - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
<b>Սարգիս Սկրտչեան</b> - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
<b>Саргис Мкртчян</b> - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
<b>Sargis Mkrtchian</b> - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
<b>Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան</b> - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
<b>Мери Наджарян, Рипсима Мурадян</b> - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
<b>Meri Najaryan, Hripsime Muradyan</b> - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY</b>	
<b>Գևորգ Եաղարյան</b> - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
<b>Геворг Тшагарян</b> - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
<b>Gevorg Tshagharian</b> - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
<b>Լիզա Քարիմյան</b> - ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
<b>Лиза Каримян</b> - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ «КОНТАКТНОЙ» ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

*Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE.* ..... 217

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.)** ..... 218

**Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.)** ..... 222

**Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS).** ..... 223

**Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ)** ..... 228

**Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.)** ..... 235

**Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY).** ..... 235

**ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ** ..... 237

**Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА.** ..... 247

**Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS.** ..... 248

**Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ.** ..... 249

**Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США.** ..... 257

**Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA.** ..... 257

**Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ** ..... 259

**Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА.** ..... 272

**Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.** ..... 273

**Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** ..... 274

**Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.** ..... 280

**Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.** ..... 281

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY**

**Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)**..... 282

**Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.** ..... 289

**Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.** ..... 289

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

**ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ** ..... 298

**ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ** ..... 315

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 318

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 320

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 322

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 322

## Գայանե Հովհաննիսյան

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

*Հիմնաբառեր.* 1926 թ. մարդահամար, բնակչության թվաքանակ, սպառախ կապ, սեռատարիքային կառուցվածք, ժողովրդագրական գործընթացներ:

#### ՄՈՒՏԵ

Խորհրդային միության ձևավորումից հետո կենտրոնական իշխանությունների նախաձեռնությամբ 1926 թ. դեկտեմբերին իրականացվեց առաջին համամիութենական մարդահամարը: Համաձայն նույն թվականի սեպտեմբերի 3-ի ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի կողմից ընդունված որոշման՝ մարդահամարը նպատակ ուներ բացահայտելու երկրի բնակչության թվաքանակը, նրա էթնիկական, սոցիալական և մասնագիտական կազմը<sup>1</sup>:

Մարդահամարի նախապատրաստական աշխատանքներն իրականացրեց ԽՍՀՄ պետական պլանավորման ժողովրդագրական վիճակագրության բաժինը, իսկ 1926 թ. հոկտեմբերից՝ հատուկ այդ նպատակով ստեղծված մարդահամարի բաժինը: Վիճակագրությունն իրականացվել է ռուս վիճակագիրներ Վ. Միխայլովսկու և Օ. Կվիտկինի մշակած գիտական մեթոդներով, որոնք հիմք հանդիսացան խորհրդային հաջորդ մարդահամարների համար: Վիճակագրության իրականացման հիմնական ձևանմուշներն էին անհատական թերթիկը, գյուղական բնակավայրերի ընտանիքների ցուցակը, ընտանեկան քարտը և սեփականության տեղեկագիրը (վերջին երկուսը միայն քաղաքային բնակչության համար)<sup>2</sup>:

Մարդահամարի արդյունքները, դրանց մշակման եղանակները քննարկվեցին 1927 թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցած համամիութենական վիճակագրական համաժողովում<sup>3</sup>: Մարդահամարի նախնական տվյալների հրատարակումը սկսվեց 1927 թ., կարճ արդյունքների շարքը հրատարակվեց 1927-1929 թթ., իսկ ամբողջական արդյունքները լույս տեսան 1928-1933 թթ.<sup>4</sup> 53 հատորով:

1926 թ. մարդահամարը խորհրդային վիճակագրությունների պատմության մեջ համարվում է լավագույններից մեկը: Այն առաջին համամիութենական մարդահամարն էր, որը ընդգրկում էր երկրի ամբողջ բնակչությունը: Ի տարբերություն հաջորդող մարդահամարների (հատկապես 1937 և 1939 թթ.) այն ամենից քիչ քաղաքականացվածն էր և նպատակ ուներ բացահայտելու բնակչության ժողովրդագրական ճշգրիտ պատկերը՝ զերծ լինելով դիտավորյալ հավելումներից և աղավաղումներից<sup>4</sup>: Մարդահամարը առանձնանում է նաև արդյունքների հրատարակման և տվյալների ընդգրկվածության տեսանկյունից<sup>5</sup>: Այն հնարավորություն տվեց բացահայտելու նախընթաց պատմաշրջանի ժողովրդագրական գործընթացները, դրա հետևանքները, վերլուծելու առկա ժողովրդագրական պատկերը, բնակչության հիմնական ժողովրդագրական հատկանիշները:

\* Հղվածը ներկայացվել է 20.10.2020 թ., գրախոսվել՝ 25.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

<sup>1</sup> Ст'и Воробьев Н., Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Краткий обзор организации и производства, М., 1938, с. 23.

<sup>2</sup> Ст'и նույն տեղում, էջ 27:

<sup>3</sup> Ст'и Жиромская В., Киселев И., Поляков Ю., Полвека под грифом: секретно: Всесоюзная перепись населения 1937 года, М., 1996, с. 28.

<sup>4</sup> Բացառությամբ հատուկ հավաքակապմի (բանակ, բանտարկյալներ) վերաբերյալ տվյալների, որոնց թվական տվյալները տեղաբաշխվում էին երկրի ամբողջ տարածքով:

<sup>5</sup> Ст'и Воробьев Н., Всесоюзная перепись населения 1926 года. 2-е изд., М., 1957, с. 104-106.



Իհարկե, մարդահամարը գերծ չէր նաև թերութիւններից, սակայն դրանք գերազանցապես օբյեկտիվ բնույթ ունեին և պայմանավորված էին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում վիճակագրական գործի ձևավորման ընթացքով, համապատասխան գործիքակազմի բացակայությամբ<sup>1</sup>:

### ԼՂԻՄ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ինչպես հայտնի է, ՌԿ(Բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի ոչ օրինական, ազգերի ինքնորշման սկզբունքին և երկրամասի եթևիկ կազմին հակասող որոշման համաձայն՝ հայկական Արցախը միացվեց Խորհրդային Ադրբեջանին՝ մարզային լայն ինքնավարության իրավունքով: Չնայած ադրբեջանական իշխանությունների նպատակաուղղված երկամյա հետաձգումներին, այնուամենայնիվ, հայկական կողմի համառ ջանքերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար մարզ առանձնացնելու որոշումը կյանքի կոչվեց Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի հրամանագրով<sup>2</sup>: ԼՂԻՄ-ի կազմավորումից անմիջապես հետո ադրբեջանական իշխանությունները, մարզի ժողովրդագրական պատկերը փոխելու մտասևեռմամբ, կիրառեցին ժողովրդագրական անուղղակի քաղաքականության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք էին վարչատարածքային տարաբնույթ փոխակերպումների միջոցով Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական սահմանակցության բացառումը՝ կասեցնելու համար բնակչության հնարավոր տեղաշարժերը այդ երկու տարածքների միջև, համախումբ թյուրքական տարրի առանձնացումը՝ Շուշիի շրջանի ստեղծմամբ, Շուշի քաղաքից ինքնավար մարզի կենտրոնի տեղափոխումը՝ կանխելու համար հայ բնակչության հնարավոր վերադարձը քաղաքի ավերված հայկական հատված, մարզում սոցիալ-տնտեսական խտրական քաղաքականության իրագործումը<sup>3</sup>: Խորհրդային առաջին մարդահամարը ի ցույց դրեց ադրբեջանական կողմի ժողովրդագրական այդօրինակ քաղաքականության հետևանքներն ինքնավար մարզի տարածքում:

Մինչ անդրադառնալը մարզի բնակչության թվաքանակին, անհրաժեշտ է նշել, որ մարդահամարի ծրագրով հաշվառման է ենթարկվել միայն առկա բնակչությունը: Մարդահամարի ճգնաժամային օրը 1926 թ. դեկտեմբերի 16-ի լույս 17-ի գիշերն էր<sup>4</sup>:

Վիճակագրության տվյալների համաձայն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը ուներ 4161 քառ.կմ տարածք<sup>5</sup> և բաղկացած էր 5 վարչական շրջաններից՝ Խաչեն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ, Շուշի: Մարզի տարածքում ամբողջ բնակչությունը կազմում էր 125300 մարդ, որից 8293-ը՝ կամ 6.6%-ը քաղաքային, իսկ 117007-ը՝ կամ 93.4%-ը գյուղական բնակչությունն էր:

Համամիութենական առաջին մարդահամարը, ի թիվս այլ խնդիրների, նպատակ ուներ բացահայտելու ԽՍՀՄ բնակչության եթևիկ կազմը: Այս նպատակին էին միտված անհատական թերթիկի չորրորդ և հինգերորդ՝ համապատասխանաբար ազգային պատկանելությանը և մայրենի լեզվին վերաբերող հարցերը: Հատկանշական է, որ վիճակագրությունը ազգային պատկանելությունը որոշում էր ըստ ինքնորոշման սկզբունքի: Եթե հարցվողը դժվարանում էր պատասխանել, ապա ազգային պատկանելությունը գրանցվում էր ըստ

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Андреев Е., Дарский Л., Харькова Т., Население Советского Союза 1922-1991, М., 1993, с. 16-22.*

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս *Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղայան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Ե., 2015, էջ 120-124:*

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս *Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. սկզբներին, «Գիտական Արցախ», 2020, № 4 (գտնվում է տպագրման փուլում):*

<sup>4</sup> *Տե՛ս Воровьев Н., նշվ. աշխ., էջ 28-29: Նշենք նաև, որ քաղաքային բնակավայրերում, շնորհիվ ընտանեկան քարտերի գրառումների, բացի առկա բնակչությունից, հաշվառվել է նաև մշտական բնակչությունը:*

<sup>5</sup> *Ըստ Գ. Բաղայանի հետապոտության՝ տարածքի այս չափը սխալ հաշվարկման արդյունք է և ԼՂԻՄ-ը իր կազմավորման սկզբնական շրջանում ընդգրկել է շուրջ 5000 քառ.կմ տարածք: Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 135:*

Նրա մոր ազգության: Ամրագրված էր նաև, որ մարդիկ, ովքեր կորցրել էին իրենց ազգակցական կապը նախնիների հետ, կարող էին ներկայանալ այն ազգությամբ, որի ներկայացուցիչ իրենց համարում են մարդահամարի իրականացման ժամանակ<sup>1</sup>: Ինչ վերաբերում է մայրենի լեզվի վերաբերյալ հարցին, ապա ըստ մարդահամարի ծրագրի, մայրենի էր համարվում այն լեզուն, որին «հարցվողը ամենից լավ տիրապետում էր կամ որով սովորաբար խոսում էր»<sup>2</sup>:

Լեզվի և ազգության վերաբերյալ մարդահամարի տվյալները մշակվել են ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի բնակչության էթնիկ կազմի ուսումնասիրության հանձնաժողովի կողմից պատրաստված ազգությունների և լեզուների ցանկի հիման վրա: Նշենք, որ 1926 թ. մարդահամարի ազգությունների ցանկում ներառված էր 195 էթնիկ հանրույթ և հատուկ ընդգծված էր, որ բացառված է ադրբեջանցիներ անվան օգտագործումը՝ թյուրքադրբեջանցիներ նշանակությամբ և կիրառված է ընդհանուր թյուրք անվանումը՝ առանց աշխարհագրական տեղորոշման<sup>3</sup>:

Հարկ է նկատել, որ մարդահամարի արդյունքներում ներկայացված էր բնակչության էթնիկ կազմը ինչպես ըստ ինքնորոշման, այնպես էլ ըստ մայրենի լեզվի: Այս հանգամանքը հատկապես Ադրբեջանի էթնիկ պատկերի ուսումնասիրության համար ունի կարևոր նշանակություն, քանզի, ինչպես ցույց է տալիս տվյալների վերլուծությունը, ազգային պատկանելության այդ երկու ցուցիչները Ադրբեջանի դեպքում միշտ չէ, որ համընկնում են: Այդ երկրում իրենց թյուրքեր էին համարում բնակչության 62.2%-ը, մինչդեռ «այդ զանգվածի որոշ հատված, անկասկած, այլ էթնիկական ծագում ուներ»<sup>4</sup>: Այլ էթնիկ հանրույթների թյուրք ներկայանալու հանգամանքում կարևոր դերակատարություն ուներ պետության «տիտղոսային» ազգություն ներկայանալու բնակչության ձգտումը, որը 1930-ական թթ. վերջնական պաշտոնական ձևակերպում ստացավ Ադրբեջանում իրականացված անձնագրավորման գործընթացով<sup>5</sup>: Էթնիկ պատկանելությամբ թյուրք հաշվառվածների մի զգալի հատվածի՝ 91.461 մարդու կամ 6.4%-ի համար մայրենի լեզուն ոչ թե թյուրքերեն էր, այլ ուրիշ լեզուներ (օրինակ կյուրինական (լեզգիների լեզուն), թաթերեն, թալիշերեն և այլն): Ահա թե ինչու ըստ ազգային պատկանելության մարդահամարի արդյունքներում ընդգծված էր, որ Ադրբեջանի թյուրքերի պարագայում ցեղային ծագումնաբանությունը որոշ դեպքերում չի հանդիսանում ազգության ցուցիչ, այլ հանդես է գալիս որպես մայրենի լեզվի ցուցիչ<sup>6</sup>: Մասնավորապես, մարդահամարը Ադրբեջանում հավառել էր 38.3 հազար թյուրքեր՝ թաթերեն լեզվով, 31.7 հազար թյուրքեր՝ կյուրինական, 3.7 հազար՝ ջեկերեն, 2 հազար՝ այլ լեռնային լեզուներով, 4.7 հազար՝ թալիշերեն մայրենի լեզուներով<sup>7</sup>:

Թյուրքերից հետո Ադրբեջանում երկրորդ մեծաթիվ էթնիկ հանրույթը հայերն էին, որոնք կազմում էին երկրի ամբողջ բնակչության 12.2%-ը: Նրան հաջորդում էին ռուսները՝ 9.5%, ապա բնակչության իրանական խումբը (թալիշներ, թաթեր, քրդեր, պարսիկներ)՝ 6.8%, լեզգիները՝ 1.6% և այլն (տես աղյուսակ 1)<sup>8</sup>: Ադրբեջանի բազմէթնիկ կազմի մասին վկայում է նաև այն, որ ընդհանուր առմամբ մարդահամարը Ադրբեջանում հաշվառել էր 95

<sup>1</sup> Ст'и Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Народность и родной язык населения СССР, М., 1928, с. III.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Ст'и Программы и пособия к разработке всесоюзной переписи населения 1926 года, выпуск VII: Перечень и словарь народностей, М., 1927, с. 2.

<sup>4</sup> Население Закавказья: Краткие итоги: Народность-Родной язык, Возраст-Грамотность, Всесоюзная перепись населения 1926 г., Тифлис, 1928, с. IX.

<sup>5</sup> Ст'и Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги, М., 1992, с. 246.

<sup>6</sup> Ст'и Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Народность и родной язык населения СССР, с. VIII.

<sup>7</sup> Ст'и նույն տեղում:

<sup>8</sup> Ст'и նույն տեղում, էջ 126:

տարբեր էթնիկ հանրույթ, այն դեպքում երբ Վրաստանում այդ ցուցանիշը կազմում էր 74, իսկ Հայաստանում՝ 48<sup>1</sup>:

Աղյուսակ 1. Ադրբեջանի բնակչությունը ըստ ազգային պատկանելության 1926 թ. մարդահամարի տվյալներով (ինքնորոշման սկզբունք)

	բնակչության թիվը	%.
<b>ընդհանուր</b>	<b>2314571</b>	<b>100</b>
թյուրքեր	1437977	62.2
հայեր	282004	12.2
ռուսներ	220545	9.5
թալիշներ	77323	3.3
թրդեր	41193	1.8
լեզգիներ	37263	1.6
թաթեր	28443	1.2
հրեաներ	20578	0.9
ավարներ	19104	0.8
ուկրաինացիներ	18241	0.78
ցախուրներ	15552	0.72
գերմանացիներ	13149	0.6
լեռնական հրեաներ	10270	0.4
թաթարներ	9948	0.4
վրացիներ	9452	0.4
պարսիկներ	9446	0.4
բելառուսներ	2867	0.12
լեհեր	2460	0.10
ուդիներ	2445	0.10
օսեր	1024	0.04
այլ էթնիկ հանրույթներ	10776	0.5
օտարերկրացիներ	44511	1.9

Այժմ ներկայացնենք ԼՂԻՄ բնակչության ազգային կազմը ըստ 1926 թ. մարդահամարի արդյունքների: Այստեղ բնակչության ճնշող մեծամասնությունը ազգային պատկանելության երկու ցուցիչներով էլ (ինքնորոշման սկզբունք և մայրենի լեզու) կազմում էին հայերը: ԼՂԻՄ ամբողջ բնակչության 89.14%-ը կամ 1 116 94 մարդ հայ բնակչությունն էր, 12592-ը կամ 10.04%-ը՝ թյուրքերը, 596 մարդ կամ 0.5%-ը՝ ռուսները, 277-ը կամ 0.22%-ը՝ այլ էթնիկ հանրույթները (տես աղյուսակ 2)<sup>2</sup>:

Աղյուսակ 2. ԼՂԻՄ բնակչությունը ըստ ազգային պատկանելության 1926 թ. մարդահամարի տվյալներով

	քաղաքային բնակչություն		գյուղական բնակչություն		ընդհանուր			1000 բնակչի հաշվով
	ար	իգ	ար	իգ	Ար	իգ	Ընդհ.	
ընդհանուր	4179	4114	58952	58055	63131	62169	125300	1000

<sup>1</sup> Статистика населения Закавказья: Народность-Родной язык, Возраст-Грамотность, Всесоюзная перепись населения 1926 г., с. IX.

<sup>2</sup> Статистика Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Народность и родной язык населения СССР, с. 127.

ըստ ինքնորոշման սկզբունքի								
հայեր	1517	1300	54708	54169	56225	55469	111694	891.4
թյուրքեր	2543	2700	3818	3531	6361	6231	12592	100.5
ռուսներ	27	41	278	250	305	291	596	4.8
այլ	42	27	114	94	156	121	277	2.2
օտարերկրաց.	50	46	34	11	84	57	141	1.1
ըստ մայրենի լեզվի								
հայերեն	1504	1296	54717	54167	56221	55463	111684	891.3
թյուրքերեն	2598	2744	3873	3553	6471	6297	12768	101.9
ռուսերեն	64	68	310	286	374	354	728	5.8
այլ լեզուներ	13	6	52	49	65	55	120	1.0

Քանի որ 1920-ական թթ. սկզբներին ԼՂԻՄ քաղաքային և գյուղական բնակչության վիճակագրությունները տեղի են ունեցել տարբեր տարիներին, մենք չենք կարող համեմատել դրանց հանրագումարային արդյունքները 1926 թ. մարդահամարի արդյունքների հետ՝ ըստ ազգությունների բնակչության աճի տեմպերը վերլուծելու համար: Ուստի դրանք կներկայացվեն յուրաքանչյուրը առանձին՝ ըստ գյուղական և քաղաքային բնակչության և դրանց աճման տեմպերի:

Նախ բնության առնենք ԼՂԻՄ գյուղական բնակչության էթնիկ կազմի փոփոխությունները 1921-1926 թթ.: Համամիութենական առաջին մարդահամարի արդյունքներով ԼՂԻՄ գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր 117007 մարդ, որից հայ բնակչությունը կազմում էր 108877-ը կամ բնակչության 93.05%-ը, թյուրքերը կազմում էին 7349-ը կամ 6.3%-ը, ռուսները՝ 528-ը կամ 0.5%-ը, այլ էթնիկ հանրույթները՝ 0.2% (տես աղյուսակ 3):

*Աղյուսակ 3. ԼՂԻՄ գյուղական բնակչության ազգային կազմը ըստ 1926 թ. մարդահամարի (գլխավոր ազգություններ)*

վարչական շրջաններ	հայեր		թյուրքեր		Ռուսներ	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Վարանդայի շրջան	28190	97.7	650	2.3	9	0.1
Ջրաբերդի շրջան	29292	92.2	1914	6.0	434	1.4
Դիզակի շրջան	24685	97.8	443	1.8	76	0.3
Խաչենի շրջան	26702	99.7	22	0.1	9	0.1
Շուշիի շրջան	8	0.2	4320	99.4	-	-
Ընդհանուր	108877	93.05	7349	6.3	528	0.5

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջմարդահամարային ժամանակաշրջանում ԼՂԻՄ գյուղական բնակչության աճն ըստ ազգությունների հակընթաց միտում էր արձանագրել: Հայ բնակչության նվազումը 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի համեմատությամբ կազմում էր 13549 մարդ կամ 11% (տարեկան նվազման տեմպը՝ 2.2%), իսկ թյուրքերի բացարձակ աճը՝ 799 մարդ կամ 12.2% (տարեկան աճման տեմպը՝ 2.4%): Դա նշանակում էր, որ ԼՂԻՄ գյուղական հայ բնակչությունը նվազել էր այնքանով, որքանով որ ավելացել էր թյուրքական գյուղական բնակչությունը: Նկատենք, որ բնաարկվող ժամանակաշրջանում հայ առկա գյուղական բնակչության նվազումը գերազանցապես պայմանավորված էր մարզի սոցիալ-տնտեսական անբարենպաստ դրությամբ և կենսապայմանների անբավարար մակարդակով, որը հանգեցնում էր բնակչության արտագաղթի գլխավորապես դեպի Բաքու և նրա առևտրաարդյունաբերական շրջան: Մինչդեռ մարզի

թյուրքական բնակչության դեպքում տեղի էր ունեցել հակառակ գործընթացը, որտեղ առանցքային նշանակություն ուներ ԼՂԻՄ ձևավորումից հետո ադրբեջանական իշխանությունների խտրական ազգային քաղաքականությունը: Դրա հետևանքով հայ բնակչության տեսակարար կշիռը ինքնավար մարզի ձևավորման հենց առաջին տարիներից սկսեց նվազել, իսկ թյուրքերինը՝ ընդհակառակը շարունակական աճ արձանագրել: Նկատելի է նաև, որ հայ գյուղական բնակչության նվազման մի փոքր մասն բաժին էր ընկնում ներմարզային տեղաշարժերին՝ կապված դեպի Ստեփանակերտ բնակչության շարժի հետ:

ԼՂԻՄ քաղաքային բնակչության էթնիկ պատկերի մասին խոսելիս պետք է նշել, որ այստեղ հայ բնակչությունը կազմում էր միայն 34% կամ 2817 մարդ (տես աղյուսակ 4): Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1920 թ. մարտին Լեռնային Ղարաբաղի կենտրոն Շուշի քաղաքի հայկական մասի ավերումից հետո վերջինիս հայ բնակչությունը մեծ մասամբ սպանվեց, իսկ փրկվածները (5-6 հազար մարդ) տեղաբաշխվեցին մարզի գյուղական բնակավայրերում: Ինչ վերաբերում է Ստեփանակերտին, ապա այն քաղաքային բնակավայրի կարգավիճակ ստացել է միայն 1923 թ., որից հետո նրա բնակչությունը սկսեց զգալիորեն ավելանալ՝ մեծապես պայմանավորված բնակչության մեխանիկական շարժով: Մասնավորապես, 1924 թ. դեկտեմբերի մարդահամարը Ստեփանակերտում հաշվառել էր 2467 մարդ, իսկ 1926 թ. քաղաքի բնակչության թիվը կազմում էր 3189 մարդ (աճը՝ 29.3%, տարեկան աճման տեմպը՝ 14.6%): Քաղաքի բնակչության գերակշռող մեծամասնությունը հայեր էին՝ 85.4%, երկրորդ մեծաթիվ էթնիկ հանրույթը՝ թյուրքերը՝ 10.8%: Հակառակ պատկերն էր Շուշի քաղաքում, որտեղ բնակչության 96%-ը թյուրքեր էին, իսկ հայերը կազմում էին բնակչության ընդամենը 1.8%-ը: Նման պատկերը առաջին հերթին պայմանավորված էր 1920 թ. մարտին Շուշի քաղաքի հայության կոտորածով: Քաղաքի հայ բնակչությունը կարող էր անհամեմատ մեծաթիվ լինել, եթե Շուշին դառնար ինքնավար մարզի կենտրոնը և քաղաքի ավերված հայկական մասը վերականգնվեր: Սակայն, ադրբեջանական իշխանությունները հենց վերոհիշյալ հեռանկարը բացառելու նպատակով մարզային կենտրոնը Շուշիից տեղափոխեցին՝ կասեցնելով հայ բնակչության հնարավոր վերադարձը քաղաք:

Աղյուսակ 4. ԼՂԻՄ քաղաքային բնակչության ազգային կազմը ըստ 1926 թ. մարդահամարի (գլխավոր ազգություններ)

քաղաքներ	հայեր		թյուրքեր		ռուսներ	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Ստեփանակերտ	2724	85.4	343	10.8	59	1.9
Շուշի	93	1.8	4900	96.0	9	0.2
Ընդհանուր	2817	34	5243	63.2	68	0.8

### ԼՂԻՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Մարդահամարի արդյունքների համաձայն՝ ԼՂԻՄ բնակչության 44.6%-ը կազմում էր մինչև 15 տարեկան բնակչությունը, 15-59 տարիքային խումբը (չափահաս բնակչություն) կազմում էր ամբողջ բնակչության 44.7%-ը, իսկ տարեց բնակչությունը (60 և ավելի) կազմում էր ընդամենը 10.5%<sup>1</sup>: ԼՂԻՄ բնակչության տարիքային կառուցվածքում աչքի էր ընկնում 0-4 տարեկան երեխաների մեծաթվությունը, ինչը պայմանավորված էր նախընթաց պատմաշրջանի անկայուն ռազմաքաղաքական իրավիճակից (Առաջին համաշխարհային պատերազմ, 1918-1920 թթ. բախումներ) հետո բնակչության բնական աճի համար ստեղծված համեմատաբար նպաստավոր պայմաններով: Քննարկվող ժամանակաշրջանում հայ բնակչությունը աչքի էր ընկնում բնական աճի բարձր մակարդակով: Մասնավորապես, 1926 թվականին ԼՂԻՄ-ում գյուղական բնակչության (որի 93%-ը հայ բնակչությունն էր)

<sup>1</sup> Статистическая перепись населения 1926 года, [http://www.demoscope.ru/weekly/ssp/sng\\_reg\\_age\\_26.php?reg=58&Submit=OK](http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_reg_age_26.php?reg=58&Submit=OK) (մուտք՝ 10.10.2020):

ծնելիության մակարդակը կազմում էր 4.3%, իսկ մահացությունը՝ 1.5%, բնական աճը՝ 2.8%<sup>1</sup>: Հայ բնակչության բնական աճի նման բարձր ցուցանիշը պահպանվեց նաև հաջորդող տասնամյակի ընթացքում:

Ինչ վերաբերում է սեռային հարաբերակցությանը, ապա ԼՂԻՄ ամբողջ բնակչության սեռային կազմը բաշխված էր գրեթե հավասարապես. բնակչության 50.4%-ը կազմում էին տղամարդիկ, իսկ 49.6%-ը կանայք: Մանկահասակ տարիներին արական սեռի գերազանցությունը պայմանավորված է բնածին սեռային հարաբերակցությամբ (105 տղա 100 աղջկա դիմաց): Մինչդեռ ԼՂԻՄ բնակչության երիտասարդ և միջին տարիքային խմբերում (20-60 տարեկան) սեռային հարաբերակցությունը փոխվում էր հոգուտ իգական բնակչության: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ արական բնակչության մի զգալի հատված, սեզոնային արտագաղթի պատճառով բացակայում էր ԼՂԻՄ-ից, ինչը հանգեցնում էր առկա բնակչության կազմում սեռային հարաբերակցության փոփոխության: Ժամանակակիցների տեղեկությունների համաձայն՝ ամեն տարի ԼՂԻՄ-ից սեզոնային աշխատանքի մեկնողների թիվը տատանվում էր 10-15 հազարի սահմաններում<sup>2</sup>:

Հարկ է նկատել, որ բնակչության սեռատարիքային կառուցվածքը և նրա փոփոխությունները անմիջականորեն կապված են բնակչության թվաքանակի և վերարտադրողական ցուցանիշների հետ: Մարդահամարի արդյունքներում չկան տվյալներ ըստ ազգությունների բնակչության սեռատարիքային կառուցվածքի մասին, սակայն դրա մասին որոշակիորեն պատկերացում կարելի է կազմել վերլուծելով սեռատարիքային կազմը ըստ գյուղական և քաղաքային բնակչության՝ հաշվի առնելով այն, որ ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը հայկական էր: Մասնավորապես, գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-30 տարեկանների խմբերում, որոնք համարվում են բնակչության ամենաշարժունակ հատվածը, իգական բնակչության թվաքանակը զգալիորեն գերազանցում էր արական բնակչության թվաքանակին (տես աղյուսակ 5): Այս հանգամանքը պայմանավորված էր ինքնավար մարզի հայ բնակչության մեծածավալ արտագաղթով: Ընդ որում, աղբյուրների վկայությամբ՝ շատ հաճախ հայ բնակչության սեզոնային միգրացիան պատճառ էր հանդիսանում մշտական բնակչության վայրի փոփոխության համար<sup>3</sup>: Հետևաբար, աստիճանաբար փոփոխության էր ենթարկվելու նաև ԼՂԻՄ մշտական բնակչության թվաքանակը, վերջինիս կազմը և ժողովրդագրական հատկանիշները: Ընդգծենք նաև, որ վերոհիշյալ տարիքային խումբը համարվում է վերարտադրողական տարիքի ամենաակտիվ հատվածը, հետևաբար՝ դրանում արական սեռի պակասը բացասական ազդեցություն էր ունենալու հետագա տարիներին բնակչության վերարտադրության և աճման տեմպի վրա:

Մինչդեռ ԼՂԻՄ քաղաքային բնակչության սեռային հարաբերակցության մասին խոսելիս պետք է նկատել, որ գրեթե բոլոր տարիքային խմբերում այն բնութագրվում էր հավասարակշռությամբ: Այս հանգամանքը բացատրվում է քաղաքային բնակչության պակաս շարժունակությամբ՝ պայմանավորված վերջինիս սոցիալ-տնտեսական համեմատաբար բարվոք պայմաններով և բնակչության զբաղվածության ավելի բարձր մակարդակով:

*Աղյուսակ 5. ԼՂԻՄ գյուղական և քաղաքային բնակչության սեռատարիքային կազմը ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների*

տարիք	գյուղական բնակչություն			քաղաքային բնակչություն		
	ար.	իգ.	ընդհ.	ար.	իգ.	ընդհ.
0-4	11579	10203	21782	584	611	1195

<sup>1</sup> Տե՛ս Սեյրան Գ., *Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները*, Թիֆլիս, 1928, էջ 11:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 9, 11: Տե՛ս նաև *Խորհրդային Ղարաբաղ*, № 2, 1925, թ. 2:

<sup>3</sup> Տե՛ս Սեյրան Գ., *նշվ. աշխ.*, էջ 11; Кочарян Г., *Нагорный Карабах, Баку, 1925, с. 36; Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)*, «Հայ ազգագրություն և բանասիրություն» (կյուրթեր և ուսումնասիրություններ), հատոր 12, Ե., 1981, էջ 31:

5-9	8598	7103	15701	540	536	1076
10-14	8964	6194	15158	529	446	975
15-19	5614	4786	10400	416	380	796
20-24	3249	4276	7525	362	326	688
25-29	3118	4345	7463	313	339	652
30-34	2651	3280	5931	258	284	542
35-39	2735	3046	5781	227	236	463
40-44	2201	2288	4489	208	198	406
45-49	2196	2076	4272	165	106	271
50-54	1359	2138	3497	129	168	297
55-59	1158	1447	2605	62	70	132
60-64	1430	2091	3521	147	166	313
65-69	1022	1191	2213	56	40	96
70-74	1064	1374	2438	62	77	139
75-79	595	552	1147	26	25	51
80-84	657	840	1497	50	57	107
85-89	268	281	549	15	10	25
90-94	248	287	535	14	13	27
95-99	84	80	164	4	5	9
100+	140	146	286	8	21	29
անհայտ տարիք	22	31	53	4	-	4
ընդհանուր	58952	58055	117007	4179	4114	8293

**Ամփոփելով** վերոշարադրյալը՝ նշենք, որ 1926 թ. մարդահամարի արդյունքները ներկայացնում են ԼՂԻՄ-ի ձևավորումից հետո ադրբեջանական իշխանությունների իրականացրած ժողովրդագրական քաղաքականության հետևանքները: Մարդահամարի տվյալները արդյունք էին ադրբեջանական խտրական ազգային քաղաքականության հետևանքով սկզբնավորված հետևյալ ժողովրդագրական գործընթացների.

ա. ըստ ազգությունների ԼՂԻՄ-ի բնակչության թվաքանակի հակադիր փոփոխություն՝ հայ բնակչության նվազում և թյուրքական բնակչության աճ,

բ. ԼՂԻՄ-ի առկա բնակչության թվաքանակի նվազում, որը ժամանակի ընթացքում առաջացնելու էր մշտական բնակչության թվաքանակի փոփոխություն,

գ. ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխություն՝ կապված հայ արական բնակչության մեծածավալ արտագաղթի հետ,

դ. ԼՂԻՄ-ի վերարտադրողական տարիքի բնակչության մասնակի նվազում, որը հետագա տարիներին ազդելու էր բնակչության աճման տեմպերի վրա:

**Гаяне Оганнисян, НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.**

Цель данной статьи - представить демографическую картину НКАО по результатам первой всесоюзной переписи населения 1926 года. Для достижения этой цели мы поставили перед собой задачу изучить основные демографические процессы в Нагорно-Карабахской автономной области, представить этнический состав населения, половозрастную структуру, а также показать демографические процессы, инициированные в результате национальной дискриминационной политики властей Азербайджана.

Исследуя тему, мы пришли к выводу, что результаты первой советской переписи явились результатом ряда проявлений косвенной демографической политики, проводимой Азербайджаном после образования Нагорно-Карабахской автономной области. В частности, в демографических процессах региона была заметна противоположная тенденция роста населения: уменьшение армянского населения и увеличение тюркского населения, уменьшение наличного населения НКАО, изменение половозрастной структуры населения, уменьшение населения репродуктивного возраста.

**Ключевые слова:** перепись 1926 г., численность населения, национальный состав, половозрастная структура, демографические процессы.

***Gayane Hovhannisyán, POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).***

The purpose of this article is to present the demographic picture of NKAR based on the results of the first Soviet population census in 1926. To achieve this goal, we set the following tasks: to explore the main demographic features of the Nagorno-Karabakh Autonomous Region, ethnic composition of the population, gender and age structure, as well as to reveal the consequences of the national discriminatory policy of the Azerbaijani authorities for demographic processes.

Exploring the subject-matter theme, we came to the conclusion that the results of the first Soviet census were the consequences of a number of manifestations of indirect demographic policy pursued by the Azerbaijani after the formation of the Nagorno-Karabakh Autonomous Region. In particular, in the demographic processes of the region was observed the opposite tendency of population growth: a decrease in the Armenian population and an increase in the Turkic population, a decrease in the present population of the NKAR, a change in the gender-age structure of the population, and a decrease in the population of reproductive age.

**Key words:** census of 1926, population size, national composition, gender-age structure, demographic processes.